ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-7-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի սեպտեմբերի 29-ին փաստաբան Հովհաննես Ստեփանյանի կողմից ներկայացված՝ «Հոլտասկո» ՍՊԸ ընկերության (Երևան, Արաբկիր, Ա. Տիգրանյան փ., շ. 5, բն. 80, ԱՄ) «garoon» (No20243381) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը և, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և գրանցման է ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների համար, որոնք նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ավելի վաղ ապրանքային նշանը, այն դեպքում, երբ ավելի վաղ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ունի բարի համբավ, և եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի՝ ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկության կամ բարի համբավի շնորհիվ կամ վնաս կհասցնի ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությանը կամ բարի համբավին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 35-րդ և 43-րդ դասերի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «Գարուն» («Բի Հելթի» ՀՀ, Երևան, Աբովյան 11/51 ԱՄ, N 27973, 25.09.2018թ.) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և

քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 115-րդ, 122-րդ, 133-րդ կետերի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը շփոթելու աստիճանի նման է հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին, այդ թվում՝ նաև այն դեպքերում, երբ այդ բառային տարրերը գրված են տարբեր լեզուներով: Այս դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությամբ (ներկայացվում է փաստաթղթի բնօրինակը): Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները համարվում են շփոթելու աստիճան նման, քանի որ հիմնական ընկալման տարրեր հանդիսացող «garun» և «Գարուն» գրառումները զուգորդվում են միմյանց հետ իրենց ձայնային հատկանիշներով: Հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժվում է նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները, որոնց համար խնդրարկված է հայտարկված ապրանքային նշանի գրանցումը, նույնատիպ չեն, եթե դա սպառողին կարող է մոլորության մեջ գցել և պատճառ դառնալ այդ ծառայությունների ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Բացի այդ, Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ մասի 14-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել ՀՀ տարածքում օգտագործվող «Գարուն»

ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://www.facebook.com/garunhotel/?locale=hy_AM, https://www.spyur.am/am/companies/garun-hotel-and-restaurant-complex/34790/, https://garunhotel.am/arm/about.html և https://www.facebook.com/garunhealthyfoodcafeshop/ ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը և, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և գրանցման է ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների համար, որոնք նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ավելի վաղ ապրանքային նշանը, այն դեպքում, երբ ավելի վաղ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ունի բարի համբավ, և եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի՝ ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկության կամ բարի համբավի շնորհիվ կամ վնաս կհասցնի ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությանը կամ բարի համբավին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 35-րդ և 43-րդ դասերի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «Գարուն» («Բի Հելթի» ՀՀ, Երևան, Աբովյան 11/51 AM, N 27973, 25.09.2018թ.) համակցված ապրանքային նշանին: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները համարվում են շփոթելու աստիճան նման, քանի որ հիմնական ընկալման տարրեր հանդիսացող «garun» և «Գարուն» գրառումները զուգորդվում են միմյանց հետ իրենց ձայնային հատկանիշներով: Հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժվում է նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները, որոնց համար է հայտարկված ապրանքային նշանի գրանցումը, նույնատիպ չեն, եթե դա սպառողին կարող է մոլորության մեջ գցել և պատճառ դառնալ այդ ծառայությունների ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Բացի այդ, Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ մասի 14-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել ՀՀ տարածքում օգտագործվող «Գարուն» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://www.facebook.com/garunhotel/?locale=hy_AM, https://www.spyur.am/am/companies/garun-hotel-and-restaurant-complex/34790/, https://garunhotel.am/arm/about.html և https://www.facebook.com/garunhealthyfoodcafeshop/ ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Փաստաբան Հովհաննես Ստեփանյանի կողմից ներկայացված՝ «Հոլտասկո» ՍՊԸ ընկերության «garoon» (No20243381) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ